ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-5-1-Ա

ք. Երևան 15.06.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի հունիսի 15-ի նիստում քննարկեց 2016 թվականի մայիսի 20-ին արտոնագրային հավատարմատար Սուսաննա Կնյազյանի կողմից ներկայացված՝ «Չերի» ԷլԹիԴԻ ընկերության (Didi LiLo, Plot 726, Kartvelishvili Str. 0198 TBILISI) բողոքը «CHERIE» (IR1214704) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «ա» եւ «բ» ենթակետերի եւ «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու , ներկայացնելու եւ քննարկելու» ՀՀ կառավարության 2010թ նոյեմբերի 18-ի N 1538 -N որոշմամբ հաստատված կարգի 107-րդ կետի 3-րդ, կարգի 115-րդ կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերի, 116-րդ 1-ին եւ 2-րդ ենթակետերի, 117-րդ կետի 10-րդ, 119-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին եւ դրանով մակնշվող ապրանքների եւ (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում գրանցման ներկայացված համակցված ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 30-րդ դասի ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցման եւ միջազգային գրանցման հիման վրա պահպանվող "MON CHERI" (FERRERO S.p.A. Piazzale Pietro Ferrero, 1 I-12051 ALBA, CUNEO (IT) IR 657137, 657139, 657140, 689345), "MON CHERI FERRERO" SOREMARTEC S.A. Findel Business Center, Complexe B, Rue de Trèves L-2632 Findel (LU) 646876) բառային եւ համակցված ապրանքային նշաններին, քանի որ համեմատվող նշանները իմաստային առումով նույնն են եւ տարբերությունը կրում է միայն քերականական բնույթ: Այն է՝

«MON CHERI» ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է «ԻՄ ՍԻՐԵԼԻ, իսկ «CHERIE»-ն՝ պարզապես «ՍԻՐԵԼԻ»:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ: «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «ա» եւ «բ» ենթակետերի համաձայն ներկայացված համակցված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է 30-րդ դասի նույնական և նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող հակադրված ապրանքային նշաններին: Հետևաբար փորձաքննոթյան բաժնի կայացրած որոշումը իրավաչափ է եղել:

Բողոքարկողը ներկայացրեց իր տեսակետը, որ ներկայացված ապրանքային նշանը կարելի է գրանցել:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սուսաննա Կնյազյանի կողմից ներկայացված՝ «CHERIE» (IR1214704) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ